**«Տեղական ինքնակառավարում՝ հանուն Գորիս համայնքի զարգացման» ծրագիր**

«Գորիսի մամուլի ակումբ» հասարակական կազմակերպությունը (ԳՄԱ) Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) հետ համատեղ իրականացնում է «Տեղական ինքնակառավարում՝ հանուն Գորիս համայնքի զարգացման» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)։ Այն մեկնարկել է 2023 թվականի մարտին և կիրականացվի մինչև 2026 թվականի փետրվարը։ Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ։

Գորիս խոշորացված համայնքը կարևոր հաղորդակցական կենտրոն է Հայաստանի և Սյունիքի մարզի համար։ Գորիսը համեմատաբար հեռու է Երևանից և ունի մեծ պոտենցիալ Հայաստանի հարավային հատվածի կենտրոնը դառնալու համար՝ քաղաքացիական հասարակության, կրթության և մշակութային ոլորտներում։ Դրա համար էլ առանցքային է ներդրումներ կատարել մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման համար՝ համայնքի կայուն առաջընթացն ապահովելու նպատակով։ Այս ամենին կարելի է հասնել տարբեր դերակատարների միջև համագործակցային հարաբերությունների հաստատման և համայնքի միասնական տեսլականի ձևավորման միջոցով։

Ծրագրի նպատակն է հզորացնել Գորիս խոշորացված համայնքը՝ տարբեր դերակատարների կարողությունների զարգացման միջոցով, որը կհանգեցնի համայնքի զարգացմանն ու կբարձրացնի բնակիչների ներգրավվածությունն ու վերահսկողությունը որոշումների կայացման գործընթացներում։

Ծրագիրը բաղկացած է հետևյալ երեք փոխկապակցված բաղադրիչներից. ա) բարելավել համայնքի կանոնակարգերը, բ) զարգացնել համայնքային կազմակերպությունների ինստիտուցիոնալ կարողությունները, և գ) ձևավորել արդյունավետ համագործակցային մշակույթ նախաձեռնությունների իրականացման միջոցով։ Այս երեք բաղադրիչները կխթանեն քաղաքացիների ակտիվ ներգրավումը որոշումների կայացման գործընթացներում՝ խրախուսելով երիտասարդների ներգրավվածությունն ու գենդերային հավասարությունը։ Ծրագիրը կզարգացնի Գորիս համայնքի մարդկային և սոցիալական կապիտալը և կստեղծի օպտիմալ պայմաններ համայնքի ներսում և դրանից դուրս գործող տարբեր դերակատարների համագործակցության համար։ Մասնավորապես, կիրականացվեն հետևյալ հաջորդական քայլերը՝ համայնքի ռեսուրսների քարտեզագրում և գնահատում, տեղական դերակատարների, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության, կրթական հաստատությունների և մասնավոր սեկտորի կարողությունների զարգացում, մասնակցային պլանավորում համայնքի զարգացման ընդհանուր տեսլականի ձևավորման նպատակով, ծրագրային հնարավորությունների, հաղորդակցական հարթակների ստեղծում և ապակենտրոնացման բարեփոխումներին ուղղված ջատագովության արշավների իրականացում։ Հատուկ ուշադրություն կհատկացվի երկու կոնտեքստային թեմաների՝ խոշորացումից հետո բազմաբնակավայր համայնքի ձևավորմանն ու ապակենտրոնացման բարեփոխումներին։

Ծրագիրը կնպաստի համայնքային տարբեր դերակատարների ներգրավմանը, որն էլ, իր հերթին, կուժեղացնի համայնքային հաշվետվողականությունը, կնպաստի մասնակցային որոշումների կայացմանն ու փորձի փոխանակմանը: Այս ամենը, ի վերջո, կհանգեցնի համայնքի բնակիչների և տեղական իշխանությունների միջև հաղորդակցական կապերի ուժեղացմանը: Թեմատիկ քննարկումների կազմակերպումը կբարձրացնի համայնքի նկատմամբ սեփականության զգացումը՝ նպաստելով հանրային մասնակցությանն ու որոշումների կայացման գործընթացում հանրային վերահսկողության ձևավորմանը:

Հավելյալ տեղեկատվություն ստանալու համար հետևեք մեզ.

Վեբկայք: www.mediapoint.am ,
Ֆեյսբուք: https://www.facebook.com/gorispressclub,

Կարող եք կապ հաստատել հետևյալ էլ. հասցեով կամ հեռախոսահամարով.

Էլ.հասցե: info@gorispressclub.am
Հեռ: +37498990797.

*****

*Այս ծրագիրն իրականացվում է «Գորիսի մամուլի ակումբ» ՀԿ-ի (ԳՄԱ) կողմից՝ Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) հետ համատեղ, Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով:*
*Նյութի բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Գորիսի մամուլի ակումբ» ՀԿ-ն և պարտադիր չէ, որ այն արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:*